

պատճառէ (Բուզանդայ Ամիրանու հետ կից ըն-
ծանալուն իրը ապացոյց տես Հ. Գաթրճեան,
Տիեզերական պատմութիւն,¹ Հատոր Բ, էջ
490—515, կոչումներն ի ծանօթութեան)

Ար փակներ մեր յօգուածն իրրեւ պա-
տասխան Մալխասեանցի երկայն երկայն յօ-
գուածներուն,² թողլով հմուտ եւ անաչառ հայ
գիտնոց դատել մեր տկար տեսութիւնն՝ այս
ըստ մեզ մեր ազգային պատմութեան շատ կա-
րեւոր խնդրոյն վրայ:

Ա. Մ. ԳԱՐՍԻԱՆԵԱՆ



ԿԵՆՍՍՈՎԱԿԱՆ

ՍՏԵՓԵՆՈՍ ԲԻԺՈՎ ՅՈՎԻԹՓԵՆ ՄԵՆՈՒԿԵՆՍ

Հնդկաստանի Հայ գաղմականութիւնը,
որ տոհմային Պատմութեան մէջ ունի այնչափ
նուիրական եւ պանծալի յիշատակներ. Հնդկաս-
տանի Հայ գաղմականութիւնը, որ Հայ լրա-
գրութիւնը ծնաւ, ազգային տպագրութիւնն
ուռճացուց եւ նախին հայ բժշկութեան հիւսեց
անխնայամ պատկերներ, այլ եւս լուս եւ դժբախ-
տաբար բորբոքվին դադրած իւր անցեալ վառ
ոգիւնորութենէն, կը լսենք թէ կը տածէ զար-
դիս իւր մէջ խումբ մը Հայ բժիշկներ, որք իրենց
օրինակելի յառաջագիւտութեամբ եւ բարձր
դիրքով, ոչ նուազ մեծ փառք են իրեն, ոչ
նուազ մեծ պատիւ:

Թէեւ նպատակս էր հետազօտել առ այժմ
միայն մեր Հին բժիշկները, այսինքն անոնք՝ որ
նախին ժամանակներէն սկսեալ մինչեւ դարուս
կեսը վկայուած են ոչ եւ բժշկական Համա-
լսարանէ կամ վարժարանէ, սակայն բերկրու-
թեամբ սրտի կը սկսիմ ծանօթացնել մերայ-
նոց Հնդկաստանի արդի Հայ բժիշկներն ալ, որ-
պէս զի գոնէ բժշկականապէս յարաբերութեան
հետ ըլլալով մեր Հնդկաբնակ արեւնակիցներուն
հետ, որք հուպ ընդ հուպ բորբոքվին մուսցու-
թեան վնճը պիտի գտնուի՞նք, թէ՛ նոր Թա-
ղիստեանց մը չեղծայն անոնց սրտին թմրած
թելերը շարժել:

Հնդկահայ արդի Հայ բժիշկներուն գըւ-
խարներէն է բժիշկ Ստեփանոս Յովսէփեան
Մանուկեանց, զոր պատիւ կ'ունենամ ծանաչել
այսօր (թէեւ ի հեռուստ), շնորհիւ. Կալկաթա-

բնակ հայ վաճառական, Պ. Սինեքերիմ Հայ-
կազունի անձնանուէր բարեկամս յղած տեղե-
կութիւններուն:

Ստեփանոս բժիշկ Մանուկեանց, կ'երեւի
լինել այն հաղուած լուս Հայերէն, որ հետաւոր
երկրի մէջ, օտար աստղերու տակ, ոչ միայն չեն
մոռցած իրենց ազգութիւնը, այլ տոհմասիրա-
կան գովելէ նախանձախնդրութեամբ կը նկրտին
ընել ինչ որ կ'ունենէ հայ անուան պատիւ, հայ
անուան պարծանք ըլլալու:

Բնիկ Հնդկահայ, ծնած է նա Կալկաթայի
մէջ 1840 թուին Ապրիլի 5ին:

Իւր հայրն էր՝ Պարսկաստանի Շիրազ քա-
ղաքէն, Յովսէփ Մանուկեան, որ դարուս սկիզբ-
ները կը գաղմէ Կալկաթա. կ'ամուսնանայ տե-
ղացի հայ օրիորդի մը հետ. կ'ըլլայ հայր երեք
ղաւակի, եւ քառորդ դար մը չանցած, հնդկա-
բնակ հայութեան մէջ կ'ունենայ կարեւոր դիրք
մը: Նախապէս անշուն վիճակի տէր, բայց ի քնն
ուշիմ եւ ճարտարիմաց, իւր անխնայ աշխատա-
սիրութեան եւ եղական ինքնօգնութեան շնոր-
հիւ. ոչ միայն կ'ըլլայ երեսելի վաճառական,
այլ եւ մին այն նշանաւոր հայ աւաւակներէն,
որք դարուս առաջին կէտին Հնդկական ամայի
ծովերն հնչեցնելով, հնդկահայ նաւարկութեան
եւ հնդկահայ վաճառականութեան համար
տարածեցին ծագաց ի ծագ աշխարհի: Մեծարժեք
Թաղիստեանց իւր Վարժարան, ներուս մէջ նշա-
նակած է արգէն անոր անունը³, որ Կալկաթայի
մէջ ալ Կոպուս Մանուկ յորդորմամբ հանրա-
ծանօթ էր, այսպէս կը գրէ Պ. Ս. Հայկազունի:

1836ին Կապտան Մանուկ Բանդուկի մէջ
իրեն համար շինել կու տայ 200 թւոյ կարո-
ղութեամբ գեղեցիկ առագաստանաւ մը, որ այն
ատեններն առաջին կարգի նաւ մը կը համա-
բուի. նաւը կը կոչէ «Նշխար»⁴, յանուն իւր
անդրանիկ զստեր, որ այժմ տակաւին կ'ապրի
եղեր Կալկաթայի մէջ:

Իւր Նշխարով Կապտան Մանուկ աշ-
խարհի չորս կողմը ճամբորդներ կը սկսի փո-
խադրել. եւ կը տանի թէ իւր եւ թէ ուրիշնե-
րուն վաճառելի ապրանքները, վաճառականը մի-
անգամայն եւ նաւաւարն անձամբ ինքն ըլլալով.
Ինչ մեծ կարողութեան եւ օրպիսի՞ ճարպիկ
գործունէութեան տէր մարդ էր նա ուրեմն⁵:

¹ Յն. «Վարժարան, Կալկաթայի, Հատոր Գ. Թիւ 83,
1847 Մարտ 27, էջ 97—98:

² «Վշխար», Կալկաթայի 1847 Մարտ 27, Թիւ 83,
էջ 97—98:

³ Թաղիստեան յ. Ապետում անդրերէնէ թարգմա-
նելով Օւլըքը Գուլստիմայ «Փոխնուլըն Վէկիմիլայ»
(տպ. ի Կալկաթա 1848) կը նուիրէ «Ի յիշատակ Յով-

⁴ Հանդէս Ամբարտ 1896 Փետր., Մարտ, Ապրիլ:

Ահա այս անձին երկրորդ զաւակն էր բժիշկ Ստեփանոս Մանուկեանց, որ իւր սկզբնական կրթութիւնը ծնողական յարկին տակ ընդունելով, նախ՝ կ'աշակերտի Կալկաթայի Հայոց Սուբի Սանթոնիո Դպրոցը, ապա կը գիմնասի քաղաքի Անգղիական Սուրբ Պօղոս Ուսումնարանը, ուր տարրական ուսումնաւարտելէն վերջը՝ մեծ համութեամբ կը ձգտի բժշկական ուսմանց պարապելու:

Հազիւ 15 կամ

16 տարեկան, բժշկութեաննախապատրաստական դասերը կը սկսի Կալկաթայի Medical College-ին մէջ, ուր քիչ ատենէն սխալօք յառաջագիմութիւն ցոյց կուտայ, որ իննամականները տեսնելով Ստեփանոսին ուշիմութիւնն եւ անյափ տենչը բժշկականութեան, կը յուղարկեն զինք եւրօպա՝ Լոնտոնի արքունի բժշկական Համալսարանը:

Ստեփանոս մեծ փութով եւ ջանասիրութեամբ չորս կամ հինգ տարի կանոնաւորապէս հետեւելով այս Համալսարանի դասերուն, յաջող քննութիւններով կը պատկուի Տքեթուր-բժիշկ եւ վիրաբոյժ, 1862 Յունիսին:

Իւր բժշկական վկայական ստանալէն քանի մը ամիս յետոյ նորապսպին Տքեթ. Ստեփանոս Մանուկեանց կը վերադառնայ իւր ծննդավայրը, ուր կը հասնի 1862 Դեկտեմբերին:

Անոր վերադարձը ինզուիթեամբ կ'աւետեր

սեփալ Մանուկեան նաւապետի հանգուցելու ի հասակի 47 տանց... Ի Կալկաթա յամի Տեսուն 1842 Յունվարի 18—30^ա: Կապտան Մանուկ քեօնի էր Թ. Խ. Ա. վետումին:

Կալկաթայի Աբե-եյթի Զնդոյ Լը-էֆէ անուն հայերէն վիմագիր նոր թերթը, որուն երկրորդ թուէն քաղելով Ձմիւռնից Աբը-է-Մարգարէ-է-Մալ կը հրատարակէր այսպէս:

“Ազգային ուրախութեամբ հրատարակեմք զի պարոն Ստեփանոս Յովսէփ Մանուկ՝ կրթեալ յարուեստ բժշկութեան ի լոնտոն, դարձաւ անտի Ադիլէտա նաւաւ ի 23 Դեկտեմբերի անցելոյ, ունելով զվկայական (գիպլոմայ) անդամաց արքունի քաղաքական ծառայութեան, M. R. C. S. Յանկամբ յաջողութիւն պաշտօնի նորա:”

Կալկաթա ժամանելով, Տքեթ. Ս. Մանուկեանց կ'որոշէ պետական ծառայութեան մէջ մտնել եւ անմիջապէս Տէրութեան՝ Արագան, շոյեւնաւին մէջ բժշկութեան պաշտօն կ'անուանելու տարւոյ չափամենայն յաջողութեամբ վարելով այս պաշտօնը, 1864 Մայիսին կը թողու զայն եւ՝ Արագան, շոյեւնաւէն կը փոխադրուի վերին



Ս Տ Ե Փ Ո Ն Ո Ս Բ Ժ Ի Ե Կ Ե Ո Վ Ս Ե Ժ Փ Ո Ն Ս Մ Ա Ն Ո Ւ Կ Ե Ո Ն Յ

զորութի վերին Հնդկաստանի

Էա հարաւ քաղաքի Սանգրէճօր ըլտած տղը, ուր իւր պաշտօնն էր՝ ոչ միայն բժշկութիւն, այլ եւ քաղաքապետի փոխանորդութիւն, եւ միանգամայն արքունական գանձապահութիւն.

1864ի Հոկտեմբերէն սկսեալ Տքեթ. Ս. Ս. Մանուկեանց, անխափան կը վարէ մինչեւ այսօր իւր այն բարձր պաշտօնները, որոնց ուրիշ հայ մը Հնդկաստանի մէջ չէ տեսնարձ ընաւ:

Բաց ի յիշեալ պաշտօններէն՝ բժիշկ Մանուկեանց Երեսփոխանի պաշտօն ալ վարած էր

“Աբը-է-Մարգարէ-է-Մալ” թիւ 636, 23 Փետրուար 1863:

և և շնորհասանի մեծ քոյերս (փոքրեալ ըստ թաղեաղեանցի) համաճարակի ատեն այնչափ անձնանուիրութիւն եւ ճարտարութիւն ցոյց կու տայ, որ Անգղիական Տերութիւնէն գովասանական թուղթ կ'ընդունի:

Իւր երեսնամեայ եւ աւելի պաշտօնավարութիւններէն յոյնած, Տարթ. Ս. Մանուկեանց տարի մը յառաջ հրաժարական տալով, կը խնդրէ իւր հանգստեան թոյլալը. բայց Անգղիական Տերութիւնը տակաւին չ'ուզեր ընդունիլ անոր հրաժարականը, չկարենալով գտնել արժանաւոր յաջորդ: Մանուկեանցի պէս հաւատարիմ, Մանուկեանցի պէս ճարտար, Մանուկեանցի պէս գործունեայ, ինչպէս կը գրէ Պ. Հայկազունի: Ի՛նչ մեծ պատիւ դարուս Հայ բժշկութիւնն:

Տարթ. Ս. Մ. Յովսէփեան, Պետական պաշտօններէն հրաժարելով, անշուշտ բժշկական ասպարէզէն ալ բոլորովին քաշուիլ չի մտածիր. տակաւին երկրասարդ, մանաւանդ ամուրի, իւր պաշտմանական դիրքը թողլով, թերեւս կ'ուզէ ալ ազատ բժշկութեամբ պարապիլ, գաղտնալ իւր ծննդավայրը կաշկաւածա, եւ հոն միւր սիրելիներուն եւ ազգակիցներուն մօտիկ քիչ մ'ատեն ալ աշխատել իւր հէգ եւ չուտ աղբին համար...: Եթէ այս է իւր նպատակը, ապա նա կարող է ջանադիր ըլլալ նոր կենդանութիւն մը տալու: Կաշկաւածայի Հայոց Սոսէֆ Սոսոյեանի վարժարանին՝ որ իւր կրթութեան առաջին որորանն եղած է, եւ նոր զարկ մը տալու Մարտիկոս Գեորգիանի, որ երկեմ այնչափ երեսելի պատմական Հայերու միւր ըլլալով, այսօր՝ աւաղ, անշուշտ եւ գրեթէ օտարացեալ վիճակի մէջ կը գտնուի:

Տարթ. Մանուկեանցի աղբիւր բնաւորութիւնը, մարդասիրական եռանդն եւ բժշկական բարձր օտաղանդը, զոր կը պատմէ այսօր Հընդգնատեան համայն, մեծ դրաւական են եւ սրտիս մէջ այժմէն իր տանին առ այս քաղցր յոյներ: Այս յոյսերով որորուած, սիրով ահա կը ներկայացընեն մանր պատկերը, զոր ինքն իսկ հաճած է յղել ինձ Պ. Ս. Հայկազունեայ միջոցաւ. Ի՛նչ համակրելի եւ պատկառելի գեմք, Ի՛նչ խոհուն ճակատ, Ի՛նչ սիրուն դիմագիծեր, անխոր մը միայն բաւական է անոր տաղանդը գուշակելու, բժշկական մեծ կարողութիւնն իմանալու եւ սրտին աղնուութիւնն զգալու:

Սեր ազգային կրթական մեծ գործին, Հայ բժիշկները պարտաւոր են շատ մասէն հակելու եւ անընդմիջապակելու, յիշելով միշտ Տէքսթի

այն վեճմ եւ խորհրդաւոր խօսքը, Si la lumière arrive un jour aux hommes, c'est de la médecine qu'elle viendra, «Եթէ էրբէ՛ւ մարդիկ լուսոյն տեսնեն, լուսը բխչի՛ւն ինչէ՛ն դէպ ի՛նչ»:

Տ. ՎԱՐԱՄ ԹՈՐՈՍՄԵՆՈՍ



ՄԱՅՆԵՆԱՌՕՍԱԿԱՆ

ՊՐ. ԳՐ. ԽԱՐԱԹԵՆՆԵՐ «ՀԱՅԿԱԿՈՆ ՎԷՊԸ,

Պր. Գր. Խալիթեանցի վերջերս հրատարակած նշանաւոր գործոյն (սուսերէն, տ. թերթիս Մայիսի թուոյն «Կոր հրատարակութիւնները») բովանդակութիւնը համառօտելով յառաջ կը բերենք: Գործոյն անունն է՝ «Հայկական վէպը Մ. Խորենացոյ Հայոց պատմութեան մէջ: Փորձ աղբիւրներու քննութեան. Մանս Ա. Հետազոտութիւն, Մանս Բ. Աղբիւրներ»:

ՄՐՈՍՈՒ Ա:

1. Կերթա-Ին-Ն. (էջ 1—36.) Կերթաութեան մէջ մանրամասն կը պատմուի Խորենացոյ պատմութեան վրայ եղած քննութեանց եւ օտար լեզուով եղած թարգմանութեանց պատմութիւնը: La-Croiseէն սկսեալ մինչեւ այսօր: Կը յիշէ մէն մի քննադատի եղբայրացութիւնը՝ շեշտելով առանձնապէս La-Croiseի, Gutschmiedի եւ Carrièreի հետազոտութիւնները:

2. Կերթա-Ին-Ն. (էջ 37—46.) մէջ կը պարզէ Հայոց վէպի վրայ եղած ուսումնասիրութիւնն, ուր մեծ տեղ կը գրաւէ Մ. Իմինի գործը. հելլենակը մէջ կը բերէ Իմինի քննութեան եղբայրացութիւնը թուով 7, որով կը հաստատէ ազգային ընդարձակ վէպի մի գոյնութիւնը Խորենացոյ պատմութեան մէջ: Աստ Հեղինակը կը յիշէ նաեւ իւր երկին Քառնոպոլէ՝ հակառակ Իմինի եւ այլոց ընդունածին՝ կը ստանձնէ ապացոյցանել Հայոց ազգային վէպի Կերթա-Ին-Ն. (էջ 42), Ապա մէջ կը բերէ այն բոլոր տեղերը Խորենացիէն, ուր Հայոց ազգ. վէպի նկատմամբ կայ ա եւ ինք ցուցում, եւ կ'աշխատի պարզել նաեւ Խորենացոյ վիզական յատկաբանութիւնը (terminologie):

Վ. Ա. Կիւսեֆաւեան հապառք. (էջ 47—57.) Խորենացոյ այս գլուխներուն (գլխ. Ա. ԳԼ. Թ. Ժ.) իրրեւ աղբիւր ցոյց կու տայ Եւ-